ՊՈՂՈՍՅԱՆ ՆԱԻՐԱ
(ԵՊՀ)

«ԳԱՍԹԱՐԲԱՅԹԵՐԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՅԻ» ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ. ԲԵՔԻՐ ՑԼԶԼԸՋ

XX դ. կեսերին թուրքական գրականություն մուտք գործած արձակագիրները, օրինակ՝ Մահմուդ Մաքալը, Թալիփ Ափայդընը, Ֆաքիր Բայքուրթը և այլոք, մեծ մասամբ լինելով «սոցիալական ռեալիզմի» հետևորդներ, իրենց ստեղծագործություններում ներկայացնում էին երկրում տիրող իրավիճակը, հասարակ մարդու առաջ ծառացած խնդիրներն ու դժվարությունները: Ընդ որում, նրանց գործերի մեծ մասը տեղավորվում էին «գյուղագրության» սահմաններում, ինչը օրինաչափ է. սոցիալական խնդիրների սրությունը հատկապես ակնառու էր Թուրքիայում մեծամասնություն կազմող գյուղական միջավայրում:

1960-ականների վերջից սակայն թուրք գրողների ուշադրության կենտրոնում, թեև անհամեմատ ավելի պակաս չափով, սկսում են հայտնվել Գերմանիա և այլ եվրոպական երկրներ արտագնա աշխատանքների մեկնած թուրքերի ճակատագրերը. թուրք գրականության մեջ սկզբնավորվում է «գաստարբայթերական» թեմատիկան:

Նշենք, որ 1950-ականների կեսերին սկիզբ առած «գերմանական տնտեսական հրաշքը», ստիպեց աշխատող ձեռքերի պակաս (1961 թ. գործազուրկների թիվը երկրում 94 856 էր, իսկ թափուր աշխատատեղերի քանակը՝ 572 758[1]) ունեցող գերմանական իշխանություններին աշխատանքի ներքին շուկայում առաջացած բացը լրացնել ավելի թույլ զարգացած երկրների հետ հյուր-աշխատողներ (գերմ. *Gastarbeiter*) հրավիրելու վերաբերյալ միջպետական պայմանագրեր կնքելու միջոցով: Առաջին նման պայմանագիրը

[1] Turan K., Almanya'da Türk olmak, Istanbul, 1992, s. 14.

Գերմանիան կնքեց 1955 թ. Իտալիայի հետ[2], այնուհետև նաև Իսպանիայի, Հունաստանի, Պորտուգալիայի, Թունիսի և Հարավսլավիայի հետ:

1961 թ. հոկտեմբերի 30-ին Անկարայում աշխատուժի փոխանակման մասին պայմանագիր ստորագրվեց նաև Թուրքիայի հետ[3]: Պայմանագիր կնքելու առաջարկ թուրքական իշխանություններին արել էր Գերմանիայի նախագահ Թեոդոր Հոյսը 1957 թ. Թուրքիա իր կատարած պաշտոնական այցի ընթացքում: 1950-ականների վերջում բնակչության արագ աճի, ահռելի չափերի հասնող գործազրկության, աղքատության տարածման, գյուղաբնակների հոդազրկության, ռազմական ծախսերի մեծացման, տնտեսական և քաղաքական մի շարք խնդիրների պատճառով[4] ծանր վիճակում գտնվող Թուրքիայի կառավարող շրջանակներին նման պայմանագիրը հնարավորություն էր տալու մի կողմից նվազեցնել գործազուրկների թիվը և էականորեն թուլացնել առկա սոցիալական լարվածությունը, մյուս կողմից հարստացնել երկիրը արտերկրում աշխատող հայրենակիցների ուղարկած գումարներով, իսկ նրանց վերադարձից հետո Եվրոպայի առաջատար երկրում ձեռք բերված փորձը կիրառել սեփական տնտեսության մեջ: Այս ամենից ելնելով թուրքական իշխանությունները համաձայնվեցին պայմանագիր կնքել ոչ միայն Գերմանիայի, այլև հետագա տարիներին Բելգիայի, Հոլանդիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Մերձավոր Արևելքի նավթային պետությունների և անգամ Ավստրալիայի հետ:

Վերոհիշյալ Անկարայի պայմանագիրը նախատեսում էր երկու, առավելագույնը երեք տարին մեկ անգամ հյուր-աշխատողների կազմի փոփոխություն: Ընդ որում, ընտանիքի վերամիավորումը արգելվում էր:

---

[2] Hoff H., Fifty Years After the Invite, Turks Are Still Outsiders in Germany, http://www.time.com /time/ world/article/0,8599,2026645,00.html

[3] Göksu T., Türkiye'nin Dış Göç politikası. 21. yüzyılında Türk Dış politikası, editor I. Bal, Istanbul, 2004, s. 127.

[4] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Розалиев Ю., Особенности развития капитализма в Турции (1923-1960 гг.), М., 1972, с. 297-300, նաև՝ Старченков Р., Трудовые ресурсы Турции. Демографический, экономический и социальные аспекты, М., 1981, с. 101-109.

Այսինքն, սկզբում թուրքերի Գերմանիայում մշտական բնակության մասին խոսք չկար:

Մեկնել ցանկացողները հայտ էին ներկայացնում Ստամբուլում գործող Գերմանական համագործակցության բյուրոյի տարածաշրջանային մասնաճյուղեր և ներկայացվող պահանջներին համապատասխանելու դեպքում գերմանացի գործատուի հետ անհատական պայմանագիր կնքելուց հետո ուղևորվում էին Գերմանիա[5]: Ի սկզբանե թուրքական իշխանությունները հայտարարել էին, որ մինչ 1967 թ. 220.000 մարդ կմեկնի Գերմանիա աշխատելու, սակայն ըստ պաշտոնական տվյալների 1965 թ. այս թիվը գերազանցվել էր, և դեռ 300.000 մարդ էլ սպասում էր Գերմանիա մեկնելու իր հերթին[6], իսկ արդեն 1972 թ. մամուլում տպագրվեց Գերմանիա մեկնած 500.000-րդ թուրք հյուր-աշխատողի նկարը[7]:

Գերմանիա տեղափոխված թուրք հյուր-աշխատողների բնակության, կենցաղի և աշխատանքի պայմանները բարվոք չէին. Բեռլինի, Ֆրանկֆուրտի, Քյոլնի պես մեծ քաղաքներում, նրանք ստիպված էին ապրել համակենտրոնացման ճամբարներ հիշեցնող տներում, աշխատել առանց հանգստյան օրերի ու արձակուրդի, կատարել ամենածանր, վտանգավոր գործերը՝ վարձատրվելով տեղացիներից երկու-երեք անգամ քիչ և հաճախ ենթարկվել անհարգալից վերաբերմունքի (օրինակ, այդ տարիներին մի գերմանական թերթում տպագրված հայտարարության մեջ ասվում էր. «Վաճառվում է ֆերմերական տուն լավ վիճակում: Հարմար է ձիերի և ժամանակավոր աշխատողների տեղավորման համար»[8]): Չնայած այս ամենին՝ թուրքերը չէին շտապում ետ վերադառնալ, քանի որ գերմանական ամենացածր աշխատավարձը, անգամ գործազրկության նպաստը, մի քանի անգամ գերազանցում էր նրանց պոտենցիալ

---

[5] Այս մասին տե՛ս մանրամասն Старченков Р., Проблема занятости и миграции населения Турции, М., 1975, с. 114-115.

[6] Розалиев Ю., Классы и классовая борьба в Турции, М., 1967, с. 113.

[7] The Cambridge History of Turkey, Turkey in the Modern World, Edited by Reşat Kasaba, Vol. 4, London, 2008, p. 199.

[8] Прокопович А., Социально-экономические проблемы миграции турецких рабочих в страны Западной Европы, Турция: История, экономика, политика, М., 1984, с. 237.

եկամուտը Թուրքիայում: Սա էր պատճառը, որ 1962 թ. դեկտեմբերի 12-ին ռոտացիայի սկզբունքի վերացնելու վերաբերյալ դաշնային բյուրոյի որոշումը միգրանտները մեծ գոհունակությամբ ընդունեցին և մեծմասամբ օգտվեցին աշխատանքային պայմանագիրը վերակնքելու հնարավորությունից: Իսկ 1964 թ. սկսած միգրանտները, օգտվելով ընտանիքների վերամիավորման ծրագրից, սկսեցին Գերմանիա տեղափոխել իրենց ծնողներին, կանանց ու երեխաներին, ինչը անխուսափելիորեն թուլացնում էր նրանց կապը Թուրքիայի հետ և կրկնապատկում Գերմանիայում մնալու հավանականությունը: Թուրքական պետությունն էլ իր հերթին չէր անհանգստանում միգրանտների շուտափույթ վերադարձի մասին, քանի որ տարեցտարի աճող դրամական փոխանցումները մեծապես նպաստում էին տնտեսական մի շարք հարցերի կարգավորմանը: Ավելին, երկրի իշխանությունները սահմանել էին հատուկ տոկոսադրույք արտարժույթով փոխանցումների, թուրքական բանկերում արտարժութային հաշիվների համար: Գերմանիայում թուրքերի կուտակած միջոցները Թուրքիա բերելու համար անգամ հատուկ պայմաններով ստեղծվեցին միգրանտների բաժնետիրական ընկերություններ[9]: Այս նախաձեռնությունը թեև լայն տարածում չգտավ, բայց ինքը փաստը արդեն խոսուն է:

1973 թ. համաշխարհային նավթային ճգնաժամի հետևանքով Գերմանիայում, ինչպես և ամբողջ աշխարհում, առաջ եկած տնտեսական խնդիրները ստիպեցին երկրի իշխանություններին կասեցնել ներգաղթողների հոսքը: Սակայն պաշտոնական ներգաղթի կասեցման արդյունքում աննախադեպ չափերի հասած ապօրինի ներգաղթի (մարդիկ որպես զբոսաշրջիկներ կամ հյուրախաղերի մեկնող սպորտային, պարային խմբերի անդամներ հատում էին սահմանն ու այլևս չէին վերադառնում) և ընտանիքների վերամիավորման գործընթացի շարունակման պատճառով գերմանաբնակ թուրքերի թիվը շարունակեց ավելանալ: Իսկ 1980 թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո մեծ թվով քաղաքական փախստականներ հեռացան Գերմանիա՝ համալրելով տեղի թուրքական համայնքի շարքերը:

---

[9] Розалиев Ю., Экономическая история Турецкой Республики, М., 1980, с. 277.

Անկախ Գերմանիայում հայտնվելու պատճառներից ու ճանապարհներից բոլոր թուրք միգրանտներն մի կողմից առերեսվում էին նոր միջավայրին, իրենց խորթ գերմանական բարքերին հարմարվելու բարդությունների, սեփական ինքնությունը կորցնելու վտանգի հետ, մյուս կողմից էլ տանջվում հայրենիքի կարոտից ու ընտանիքների հետ բաժանումից: Այս բոլոր խնդիրները իրենց արտացոլումը ստացան Նևզաթ Ուսթյունի, Լեյլա Էրբիլի, Ադալեթ Աղաօղլուի, Ֆաքիր Բայքուրթի, Նիհաթ Բեհրամի և այլոց ստեղծագործություններում, սակայն «գաստարբայթերական թեմատիկայի» սկզբնավորումը թուրք գրականության մեջ, մեծ մասամբ, կապվում է հայտնի գրող Բեքիր Յըլդըզի անվան հետ[10]: Ծանր ֆինանսական դրությունը և երեք երեխաների ապրուստը հոգալու անհրաժեշտությունը 1962 թ. բազմաթիվ թուրքերի պես նրան էլ ստիպեցին մեկնել Գերմանիա, որտեղ Յըլդըզը չորս տարի աշխատեց Հեյդելբերգի տպագրական մեքենաների գործարանում նախ որպես հավաքարար, ապա վարպետ, հետո հրատարկչությունում տեքստ շարող:

Հայրենիք վերադառնալով՝ Բեքիր Յըլդըզը 1966 թ. հրապարակեց «Թուրքերը Գերմանիայում»[11] ինքնակենսագրական վեպ-ռեպորտաժը, որը մասնագետների կարծիքի ամբողջովին չէր բացահայտում հեղինակի գեղարվեստական տաղանդը, սակայն աչքի էր ընկնում նորարական, արդիական թեմայով[12]: «Գաստարբայթերական» թեմատիկային են նվիրված նաև հեղինակի «Սպիտակ երգ»[13], «Գերմանական հաց»[14] ժողովածուները:

Ընդհանրապես թուրքական քննադատական ռեալիզմի ներկայացուցիչ լինելով՝ Բեքիր Յըլդըզը իր ստեղծագործություններում

---

[10] Pazarkaya Y., Goc sureciyle yurtdisinda olusan Turk edebiyatı, Turk edebiyatı tarihi, Ankara-İstanbul, 2007, s. 580.

[11] Yıldız B., Türkler Almanya'da, İstanbul, 2012.

[12] Репенкова М., От реализма к постмодернизму. Современная турецкая проза, Гуманитарий, М., 2008, с. 80.

[13] Yıldız B., Beyaz Türkü, İstanbul, 2012.

[14] Yıldız B., Alman ekmeği, İstanbul, 2012.

ներկայացնում էր «Ուրֆայի խուլ գյուղը»[15] (որտեղից էլ ինքն էր ծագումով), գյուղացիների չարքաշ առօրյան, նրանց կյանքը թունավորող նախապաշարմունքները, զրկանքներն ու անարդարությունը: «Գասթարբայթերական» թեմատիկային նվիրված ստեղծագործություններում ևս հեղինակը որդեգրել է այս գիծը՝ նկարագրելով նույն հասարակ մարդկանց կյանքը Գերմանիայի մեծ, անծանոթ քաղաքներում: Նա վարպետորեն պատկերում է օտար միջավայրում հայտնված մարդկանց դժվարությունները, հոգեկան ապրումները, խորթ հասարակությանը հարմարվելու բարդությունները, այսինքն՝ անդրադառնում է «գասթարբայթերների» համար առանցքային դարձած բոլոր խնդիրներին:

Առաջին հերթին, հեղինակը ներկայացնում է այն պատճառները, որոնք ստիպում են մարդկանց դիմել «փախուստի». այդպես է կոչում միգրացիան «Թուրքերը Գերմանիայում» վեպի գլխավոր հերոս Յուջեն: Նա ասում է. «Մի ժամանակ մեր նախնիները սրերով էին գրավում Եվրոպան, այժմ մենք անձնագրերով չենք կարողանում անցնել: Սրերի տերերը կարող էին անել ինչ ցանկանային: Անձնագրերի տերերը ստիպված են անել այն, ինչ իրենց հրամայում են»[16]: Եվ չնայած Բեքիր Յըլդըզի հերոսներից յուրաքանչյուրն իր յուրահատուկ ճակատագիրն ու խնդիրներն ունի, բայց արտագաղթելու հիմնական պատճառը բոլորի մոտ էլ մեկն է՝ աղքատությունը, գործազրկությունը: Թեև կան նաև այնպիսի մարդիկ, ովքեր մեկնում են Գերմանիա ավելի ազատ կյանք վարելու նպատակով: Այս մասին են վկայում «Թուրքերը Գերմանիայում» վեպի սկզբում Ստամբուլից Մյունխեն մեկնող գնացքի կուպեի ուղևորների պատմությունները: Նույն վեպում, ինչպես նաև «Մաուզերը» պատմվածքում էլ ընթերցողն իմանում է, որ «արևմտյան դրախտ» հասնել ցանկացողների թիվն այնքան մեծ է, որ մարդիկ մեկնողների ցուցակում գրանցում են նորածին երեխաներին՝ հուսալով, որ նրանց հերթը կհասնի, երբ չափահաս դառնան: Իսկ մինչ

---

[15] Утургаури С., О некоторых особенностях современного турецкого критического реализма (на примере новеллистики Бекира Йылдыза), Народы Азии и Африки: история, экономика, культура, № 6, М., 1976, с. 250.

[16] Yıldız B., Türkler Almanya'da, ..., s. 5.

այդ գնալու թույլտվության դիմաց կաշառք տալու համար վաճառում են ամենաթանկ իրերը[17], կեղծում փաստաթղթերը[18]:

Սակայն թե՛ վեպի հետագա ընթացքից, թե՛ պատմվածքներից պարզ է դառնում, որ Գերմանիայում թուրքերին սպասում է միայն ծանր աշխատանք, հիասթափություններ ու կորուստներ: Մանրակրկիտ նկարագրելով աշխատողների առօրյան՝ Բ. Յըլդըզը վերականգնում է առաջին միգրանտների կյանքի պատկերը և հնարավորություն տալիս հասկանալ թուրքական համայնքի կայացման առանձնահատկությունները: Բոլոր միգրանտներն ապրում են միանման կացարաններում, աշխատում մեծ գործարաններում, ուր բանվորը համակարգի գործունեության համար անհրաժեշտ սովորական գործիք է: Նույնիսկ կրթված մարդիկ են հաճախ ստիված անել ծանր ֆիզիկական աշխատանք: Սակայն որոշ ժամանակ անց թուրքերը սովորում են նոր կյանքին, ուր ամեն ինչ պլանավորված է, ուր այլընտրանքի բացակայության պարագայում կարելի է նույնիսկ խոզի միս ուտել: Քանի որ հեղինակի խոսքերով գուցե «անհավատների» համար աշխատելը ավելի մեծ մեղք է, քան խոզի միս ուտելը[19]: Ընդհանրապես, Բ. Յըլդըզի ստեղծագործություններում թուրքական ինքնության պահպանման ու փոփոխության հարցը ներկայացված է այդպիսի առօրյա դրսևորումներով: Չնայած միգրանտները դեռ ամուր կապերով կապված են հայրենիքի հետ, ցանկանում են ետ վերադառնալ, բայց նոր կյանքն ու նոր հնարավորությունները փոխում են մարդկանց: Կանայք սկսում են տաբատ կրել և հրաժարվում են ենթարկվել ամուսիններին, տղամարդիկ Թուրքիայում ապրող ընտանիքին փող ուղարկելու փոխարեն ամբողջ աշխատած գումարով գերմանական բարեկեցության խորհրդանիշ մեքենա կամ այլ թանկարժեք տեխնիկա են գնում: Սակայն այս ամենը երջանկություն բերել չի կարող, քանի որ խորթ է և օտար: Արդյունքում ամուսինը սպանում է իրեն չլսող կնոջը, մեքենան պարզապես փչանում է Թուրքիայի վատ ճանապարհների պատճառով, իսկ թանկարժեք տեխնիկան օգուտ տալու փոխարեն վնասվածքներ է առաջացնում:

---

[17] Yıldız B., Beyaz Türkü, s. 65.

[18] Yıldız B., Türkler Almanya'da, ..., s. 12.

[19] Նույն տեղում, էջ 44:

Հեղինակը անդրադառնում է նաև գերմանական ու թուրքական մշակույթների բախմանը, նկարագրում է երկու հասարակությունների իրար հակասող բարքերը: Գաստարբայթերների համար տարօրինակ է ամեն ինչ՝ կանանց բաց հագուստներից մինչև պարտքով փող տալու խնդրանքը զարմացած մերժելը. «Մենք ոչ ոքի չենք օգնում, - ասում է գերմանացի բանվորը, - քանի որ ոչ ոք օգնություն չի խնդրում: Ամոթ չի չօգնելը, ամոթ է օգնություն խնդրելը» [20]: Երկու հասարակությունները հակադրելով՝ հեղինակը, երբեմն ընդունելով գերմանական նորմերի իրավացիությունը, նախընտրությունը տալիս է թուրքական կենսաձևին:

Այսպիսով, Բ. Յըլդըզը թուրք գրականության մեջ «գաստարբայթերական» թեմատիկան առաջ քաշած առաջին հեղինակն էր: Նրա ստեղծագործությունները բավականաչափ նյութ են տալիս միգրանտների առաջին սերնդի սոցիալական և հոգեբանական խնդիրները հասկանալու և ուսումնասիրելու համար: Սեփական փորձի վրա հիմնվելով՝ նա ներկայացրել է միգրանտների կյանքը, կենցաղի առանձնահատկությունները, այն հիմնական խնդիրներն ու բարդությունները, որոնց նրանք հանդիպում էին նոր երկրում:

Ավելին, Բեքիր Յըլդըզը արդարացիորեն կարող է համարվել նաև Գերմանիայի թուրքական գրականության հիմնադիրներից, քանի որ միգրանտական կյանքի նկարագրություններն ու վերլուծությունը, ինքնության պահպանման ու կորստի խնդիրը, մշակույթների բախման հարցը, որոնց իր ստեղծագործություններում անդրադարձել է Բ. Յըլդըզը, դարձան և թերևս ցայսօր էլ որոշ փոփոխություններով շարունակում են մնալ նաև Գերմանիայի թուրքական համայնքի գրականության հիմնական թեմաները և այս կամ այն չափով արտացոլված են բոլոր գերմանաբնակ թուրք գրողների ստեղծագործություններում:

---

[20] Նույն տեղում, էջ 59:

POGHOSYAN NAIRA
(YSU)

THE THEME OF "GASTARBEITERS" IN THE TURKISH LITERATURE: BEKIR YILDIZ

The initiation of the theme of "Gastarbeiters" in the Turkish literature started in the middle of the XX century when the first gastarbeiters from Turkey went to Germany for work. Famous writer Bekir Yildiz was the first Turkish writer who focused on the problems of the Turkish gastarbeiters in his works. His novel "Turks in Germany" became the cornerstone of the Turkish-German literature. The books called "White song", "German bread" are another works of the author. Moreover, the main problems he raised in his works are still among the most discussed issues of the contemporary Turkish literature in Germany.